ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 177. Գողությունը

1. Գողությունը՝ ուրիշի գույքի գաղտնի հափշտակությունը, որը կատարվել է զգալի չափերով՝~~Գողությունը՝ ուրիշի գույքի զգալի չափերով գաղտնի հափշտակությունը՝~~

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

2. Գողությունը, որը կատարվել է՝

1) զգալի չափերով, մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ,

2) խոշոր չափերով,

3) զգալի չափերով, պահեստարան կամ շինություն ապօրինի մուտք գործելով՝

4) *(կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)*

5) *(կետն ուժը կորցրել է 09.06.04 ՀՕ-97-Ն)*

6) անձի կողմից կրվող հագուստից, պայուսակից կամ անձի մոտ գտնվող այլ առարկայից կամ տրանսպորտային միջոցից՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից հազարապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ երկուսից հինգ տարի ժամկետով:

3. Գողությունը, որը կատարվել է՝

1) առանձնապես խոշոր չափերով,

1.1) բնակարան ապօրինի մուտք գործելով,

2) կազմակերպված խմբի կողմից՝

3) *(կետն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)*

պատժվում է ազատազրկմամբ՝ չորսից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. *(մասն ուժը կորցրել է 23.05.11 ՀՕ-143-Ն)*

(177-րդ հոդվածը փոփ. 09.06.04 ՀՕ-97-Ն, խմբ., փոփ. 01.06.06 ՀՕ-119-Ն, խմբ., փոփ., լրաց. 23.05.11 ՀՕ-143-Ն)